

## ԴԱՅ ԼԱՎԱ ագահ։

Ը ԱՏ ՀԵՂ Հարստութիւնը ագահութեան պատճառ եղած ըլլալը՝ ամենուն յայտնի է . այս երկու հակառակ յատկութիւնքը միացրնողներուն մէջ անուանի է Խնդղիացին Ճ'ն Ո՛եկկըդ կամ Խվզ՝ որ Խնտրայի մէջ հարուստ գարեջուր ծախողի մը որդի էր, և չորս տարուան հօրմէն որբ մնացած՝ մօրը ինամակալութեանը տակ մնալով՝ անկէ սորվեցաւ պժգալի ագահութեան ախտը . այս կինը թէպէտ և 2,400,000, ֆունքի ժառանգութեան տէր էր, բայց ագահութքը անօթութենէն կը չարչար էր . աս չար ախտը մէկէն 'ի մէկ տղուն վրայ չերեցաւ, բայց մօրը մեռնելէն վերջը շատ չանցաւ կամաց կամաց սկըսաւ յայտնուիլ, վասն զի ծնողաց ախտերուն ու չար օրինակներուն պատկերը տղոց միտքը տպաւորուելով կամաց կամաց իրենց սրտին վրայ կը տիրեն, և անտեն յայտնի կ'ըլլան՝ երբոր ալ դէմն առնելը անկարելի է :

Ը ատ կանուխսկէկ Ա Եսթմինսթը ի դպրոցը դրին Խվզզը, ուր որ անուանի եղաւ իրեն բարակամատութեանը պատճառաւ . վարպետները մեծ յոյս ունէին իր վրան, ինքն ալուսումնականութեան շատ սէր կը ցուցընէր, բայց ափսոս որ Ա Եսթմինսթը էլլալէն վերջը բոլորովին մոռցաւ ինչ որ սորուեր էր, ու բոլոր առած զիտութիւնը ու կը թութիւնը հօն թողուց, և անկէց վերջը մէյմ'ալ զիրք մը ձեռք չառաւ : Իսկ չափաբերական ուսմանց, որոնց ատեն մը յարմարութիւն ու սէր կը ցուցընէր, և ոչ ամենէն պարզ սկզբունքները կրնար ըմբռնել . նա և ոչ թուաբանութեան առջի կանոնները միտքը մնացեր էր :

Երբոր քսան տարուան եղաւ ճամփորդութեամբ Ճ'ենովա գնաց, ուր որ երկայն ատեն կեցաւ . ոչ եթէ իրեն կը թութիւնը կատարելագործելու կամ թէ Վաղեան գեղեցիկ լեռները դիտե-

լու համար, հապա բոլոր օրը ձիավարժութեամբ զսիացը անցընելու : Վասվարուայի ամենէն երևելի ձիավարժութեանէն մէկն եղաւ : Իրեն համար կ'ընարել ամենէն կատաղի ձիերը, ու մնատի հապարտութեամբ մեծամեծ մարդկանց ընկերութեամբը, կ'ելլէր Փիեռնէյ աւանը կ'երթար Ա ողդեռին այցելութիւն ընելու համար : Եւ ասիկայ ուրիշ բանի համար չէր՝ բայց եթէ իր ու Ա ողդեռին կերպարանացը մէջ եղած նմաննութիւնը . ինչպէս որ ինքն ալպարծելով մը կ'ըսէր :

Ա ոնտրա գաւանալէն վերջը իրեն առջի կերպը փոխեց, ու ինքը զինքը խաղի տուաւ, ու աս անպիտան ախտովը անհամար ստակ կորսընցուց . և եղաւ որ ինչուան երկու զիշեր ու մէկ օր առանց հանգիստ առնելու անընդհատ խաղաց, խուցը շատ պղտիկ ըլլալով ու խաղացողները չորս դին առած հազիւ թէ շունչ կրնային առնել . և որովհետեւ տեղ չկար սեղան գնելու խաղի թղթերուն համար, ծնկուըներուն վրայ դրած այնպէս կը խաղային : Երբոր երկրորդ օրը լուսացաւ ելաւ սենեկէն ուր որ այնչափ անհամար ստակ քիչ մը ատենուան մէջ փձացուցեր էր :

Ը աս հեղ այցելութեան կ'երթար իրեն՝ հօրեղբօրը որ կ'ըսուեր Հարվէյ Խվզ, և մօրմէն աւելի կծծի ու ագահ մարդ էր : Վ հօրեղբօրը տղայութեան ատենը բժիշկները ձեռքելնին քաշեր էին վրային, կարծելով որ քիչ ատենէն թոքացաւով գերեզման պիտի իջնայ, բայց ինքը բազգովին վասնգէն աղատեցաւ ու մինչև ԳՈ տարի ալ ապրեցաւ : Կարձահասակ, նիհար ու ողորմելի ըլլալով կարծես թէ հրաշքավկրցաւ այնչափ ատեն ապրիլ, մանաւանդ որ իրեն ագահութքը հազիւ թէ անօթութենէն շմեռնելու շափ հարկաւոր եղած կերակուրը կ'ուտէր, ան ալ սաստիկ ցաւերով ստակ երթալուն վրայ : Իրեն երկու հատիկ զուարձութիւն էին՝ մէյմը ստակը համբելը, մէյմ'ալ կաքաւի որսորդութիւն ընել, որուն մէջ շատ երևելի էր և իրեն ալ մեծ շահու դուռ

էր . անսանկ որ տարւոյն մէկ եղանակին մէջ մինակ իր երկիրներուն մէջ վեց հարիւր կաքաւ կ'որսար : Այս երեսուն տարի միակերպ իր երեք ծառայիցը հետ կաքաւու միսէն զատ ուրիշ բան չկերաւ : Չմեռուան ամենէն ցուրտ օրերը որպէս զի կրակի ստակչերթայ՝ քալելու կ'ելլար ու ասդիս անդին կը վազվատէր որ տաքնայ : Խակ երբոր անձրև գար , նոյն հանդէսը իր տանը սրահին մէջ կը կատարէր : Խակ զգեստի կողմանէ ամենեխն մոտածմունք մը չունէր . վասն զի իրեն հօրեղբօրը բաները ժառանգելով անոր լաթեղէններն ալ կը հագնէր : Ո'էկ գիշեր մը գողերը կոխեցին իրեն տունը , ու ծառաները կապելէն ու բերաննին գոցելէն վերջը , իրեն սենեակը գացին ու զինքը արթընցուցին , և ատրանակը սրտին վրայ դնելով իրեն մահ կը սպառնային թէ որ ստակին տեղը չի ցուցընէ : Խնեղճը երկայն ատեն դէմկեցաւ . բայց երբոր տեսաւ որ ալ ձար չկայ , թէպէտ սիրտը առաջ չէր երթար , բայց վերջապէս լալով ողբալով ստիպուեցաւ գզրոցի մը բալլիքը դողդղղալով ձեռուընին տալու ուր 2700 կինէ սպահէր էր . գողերը ստակը առնելէն վերջը իմացուցին իրեն՝ որ եթէ յանկարծ զիրենք մատնէ ու զինուորներով ուղենայ ետենին իյնալ , գիտնայ որ իրենց ընկերներէն մէկը հնն կը թողուին կամաւ որպէս զի զինքը սպաննին : Հարվէյ պաղպաղ ժամացոյցը հանելով , “Պարոններ , ըսաւ , կընաք երթալ ուր որ կ'ուզէք , ես միտք չունիմ ետենիդ իյնալու . ահա ձեզի քսան վայրկեան ժամանակ ինքըզինքնիդ ազատելու . բայց անկէց վերջը գիտցած ըլլաքոր պիտի ջանամծառաներս փնտուելու և զիս ազատելու , : Այս իրաւցընէ իրեն ըսածքսան վայրկեանէն վերջը կատարեց : Վանի մը ամսէն վերջը գողերէն մէկը բռնուեցաւ . եկան իրեն լուր տուին որ երթայ բանտը ու ստուգէ թէ արդեօք ան գողերէն է թէ չէ . ինքը՝ չէ պատասխանեց , իմ ստակս կորառած է մէյմ' ալ ետ չեն դարձըներ . ինչ , կ'ուզէք որ երթամ ինքըզինքս կեղեքել տամ դատաւորին : Երբոր մեռաւ Խվզ վրան

մէկ լացող մը չի գտնուեցաւ , բայց միայն իրեն ծառան , որուն որ 50 ստերլին թօղուցեր էր . իսկ իրեն ամբողջ հարըստութիւնը որ 250,000 ստերլինի կը համարէ՝ իրեն եղագորդուցին Շնն Ո'ն Ո'ն կը կըդին ձեռքն անցաւ , այս պայմանաւ որ իրեն Խվզ անունը վրան պահէ ու ջանայ ամենայն կերպով իրեն նմանելու : Ո'ն կը շատ ատենէ՝ ի վեր ցանկացեր էր այս բաղդիս , ու իրեն հօրեղբօրը հետ շատ լաւ վարուեցաւ , ու ան կէց սորվեցաւ որ պէտք չէ ամենեխն անօթութեան ձայնը մտիկ ընել : Խակ զբան իրեն հօրեղբօրը հաճոյ անցնելու համար կը ձեւացընէր թէ ագահ է , բայց վերջէն իրաւցընէ ագահ ու կծծի մարդ մը գարձաւ : Խաղի մէջ անհուն հարստութիւններ կորանցուցած ժամանակը , Հարվէյին այցելութեան որ կ'երթար ոչ երբէք մաքուր պարոնի զգեստովը գիմացը կ'ելլէր , հապա իր տնէնքիչ մը հեռու պանդոկ մը կը մըտնար ու հնն իրեն զգեստը կը փոխէր , պանդոկապետէն ջուխտ մը երկըթէ օղամանեակ փոխ կառնէր իրեն հօշիկներուն համար , ջուխտ մը կարկտած գուր պայ , մէկ հոտած ու եղուտ վերարկու մը ու գլուխը կ'անցնէր պատուած գլխարկ մը . և այսպիսի հագուստով լաւ մը ու տելէն վերջը գէպ՝ ի Հարվէյին պալատը ձամբայ կ'ելլէր : Խակ իրեն հօրեղբօրը հետ տեսնուիլը մէկ համով կատակեր գական տեսարան մըն էր . ծերը ուրախ ալքով մը կը նայէր անոր , ու սրտանց կը գրկէր զինքը , և կարծես թէ կ'ըսէր . Ո'ն արժանի ես դուն քու ցեղիդ . ազնիւ եղբօրորդիս , յուսամ որ ինձմէ վար չես մընար : Ո'ն երջէն կը նստեցընէր ու կը ակարանին մէջ փայտի կտոր մը գնել կոտար ու ծառաներուն ձեռքովը երկու գաւաթք բերել կու տար և մէկ չիշ մը կէսը պարապ , և իրենց խօսակցութիւնը միշտ իրենց ատենի մարդկանց խենթութեանցը ու հարուստներուն շռայլութեանցը վրայ էր . երբոր մութը կը կը խէր այս երկու ագահները պառկելու կ'երթային առանց ձրագի : Երբեմն երբոր Շնն պանդոկին կերպակուրը կը

մոռնար նէ՝ գիտնալով որ իրեն հօրեղը բօրը տունը բան չգտնուիր ուտելու , սենեկին պատուհանին կամացուկ մը վար կ'իջնար ու կ'երթար կերակուր փնտուելու :

**Ճ**'ոնը իրեն հօրեղքօրը մեռնելէն ետեւ ելաւ հեռացաւ իրեն լոնտրայի բարեկամներէն , և գնաց բնակեցաւ իրեն նոր ժառանգած երկիրներուն մէջ . ան ատենները քառասուն տարեկան էր . իրեն խաղալու ախտը բոլորովին մարեր էր , ինչպէս որ անկեց առաջ ձիավարժութեան ախտն ալ : Ուրիշ փափագ չունէր բայց եթէ աղուես որսալ , և ասոր համար շատ կ'ուզէր քանի մը որտորդ շուն ունենալ . և իրեն մնացած կենաց մէջ ըրած ծախքը միայն այս եղաւ . իրեն շուները նիշարութեան կողմանէ ծեր գայլերու կը նմանէին , անսանկ որ երկիրցէք կը կարծէին որ աղուեսի ոսկորներով կը կերակրին : Ըուները դարմանողը հրաշալի մարդ մըն էր , որ Ճ'ոնին տասուերկու ծառայի տեղ կը բռնէր . առաւոտը կանուխ ժամը չորսին կ'ելչէր ու կ'երթար կովերը կը կըթէր . վերջը Ճ'ոնին կերակուրը կը պատրաստէր . բայց այսչափով իրեն աշխատութիւնները չէին լըմիննար . անկեց վերջը ախտոր կ'երթար ձիերը կը կերակրէր , կը լուար , կը մաքրէր , կը զարդարէր ու սանձն ու կազմուածքը կ'անցընէր : Խոքը շուները դաշտը կը տանէր , որսորդութենէն դառնալէն ետեւ յոգնած դադրած ձիերը քերոցով կը քերէր , վերջէն խոհակերոցը կ'երթար ուր ամենայն ջանքը կը թափէր որ քիչ ստկով փառաւոր կերակուր մը պատրաստէ տիրոջը ու իրեն հրաւիրեալներուն , թէ որ ունենար նէ . կերակուրէն վերջը նոյնպէս նորէն կ'աշխատէր ձիերուն , կովերուն ու շուներուն վրայ : Խը զարմանային ամէնն ալ ասանկ սքանչելի ու սակաւագիւտ ծառայի մը վրայ , և թէ ինչպէս ամէն որ նոյն ծանր ծառայութիւնները սիրով կը կատարէր , և թէ ինչպէս միշտ ուժով ու առողջ կը մնար . իր ամէն պարտքերը անվրէպ կը կատարէր , առանց և ոչ մէկ տրտունջ մը ընե-

լու , և թէ պէտ այսպէս ամէն օր խեղձին հոգին բերանը կու գար , բայց լավզօրը հազար անգամ զինքը կը նախատէր ծոյլու վատ կանչելով ու շատ անգամ ալ “ կարծես թէ առանց աշխատելու ստակ պիտոր գտնես , կ'ըսէր :

Խապիսի ագահութեամբ յայտնի կը տեսնուի որ եղբօրորդին ոչ միայն իրեն հօրեղքօրը արժանաւոր ժառանգ մը եղաւ , հապանակ զինքն ալ անցնելով ամենայն կողմանէ կատարէց հօրեղքօրը փափազը : Իրեն հայրենի անհուն ժառանգութիւնը կը կնապատկեցաւ հարվէին եկած ժառանգութիւնը . անսանկ որ եթէ իրեն երկիրներէն ինչպէս որ պէտք է շահ հանել գիտնար՝ և միանգամայն քիչմ'ալ աշխաբացութիւն ունենար ու տարուէ տարի անոնց շահն ալ առնուոր , ու գիտնար թէ ստակը դիզելէն վերջը պէտք չէ պարապ թողուլ , հասրա զրամագլուխ դնել տարակոյս չկայ որ իրեն ծերութեան ատենները կ'նդղիայի ամենէն հարուստ մարդը կրնար ըլլալ : Բայց այսպիսի բաներուն մէջ այնչափանկար էր ու անխելք որ և ոչ երկու թիւ վըրայէ վրայ զարնել գիտէր , ու պզտիկ հաշուի մը մէջ թիւերէն աւելի սխալ կը փախցընէր . ամեննեին իրեն կալուածներուն վրայ ցուցակ մը չունէր , հապատամբանայն բան իրեն յիշողութեամբը , և շատ անգամ ուրիշներուն յիշողութեամբը կ'ընէր . միանգամայն տղու մը պէս մէկէն ամէն բանի կը հաւատար , անսանկ որ վարպետորդի մարդիկներու համար բան մը չէր իրեն քսակը ձեռք ձգելը , ուր ընդհակառակին և ոչ դահէկան մը աղքատին կ'ու զէր տալ , թէ պէտ խեղճը անօմութենէն ալ մեռնէր : Բայց սակայն չենք կրնար ըուել թէ ամեննեին մարդասիրութիւն չունէր . վասն զի շատ կ'ախորժէր իր բարեկամացը օգնել . բաւական էր որ ծայրը ստըկի չերթար : կ'նդգամ մը իրեն աղգակամներէն երկու պառաւ կնիկ զատաւորի մը դէմքանի մը անվայել խօսքեր նետած ըլլալով , նորազանգ քահանաներէն իբրև ՚ի պատիժ պիտի նզովուէին . այս պառաւները չէին գիտէր

թէ նզովքը ինչ է . բայց ատանկ լսեր էին թէ զզջման համար պէտք է շապիկ հագած , ձեռուընին մոմ բռնած եկեղեցւոյ դրանը դիմացը երթալ : Ի՞նոնք աւելի լաւ է կ'ըսէին մեռիլ քան թէ մեզի պէս ազնուական խաթուններու այնպիսի ցածութիւն : Բայց Ճար չկար , պէտք էր ապաշխարանքը կատարել : Դատապարտութեան վճիռը վազուան օրը հրապարակաւ պիտի կարդացուէր , թէ որ իրենք չաձապարէին | ոնտրա մարդ զրկելու և խմացընելու իրենց հըպատակութիւնը : Ճ'ոն գժալով անոնց՝ իրեն վրայ առաւ այս գործքս , զրպանին մէջ քանի մը հաւկիթ դրաւ , եւ լաւ 60 մզոն Ճամբայ ընելու . վասն զի ամէն անդամ որ սցսպէս մեծ Ճամբորդութիւն մը պիտի ընէր իրեն Ճամբուն պաշարը աս կ'ըլլար . հեծաւ ձիուն վըրայ ու երկրորդ օրը հասաւ | ոնտոն , ու դատաւորաց բարկութիւնը իջեցուց : Խըբոր այս երջանիկ լուրը երկու խեղջ պառաւներուն ականջը հասաւ , ալ ով կրնայ պատմել անոնց ուրախութիւնը . չէին գիտեր թէ ինչ փոխարէն ընէն Պ . | Վլվին : Վ'ուզէին անոր Ճամբորդութեան համար գացած ստակը հատուցանել , բայց մէկ իւլանտացի պարոն մը գիտնալով | Վլվին սովորութիւնը՝ գրեց անոնց թէ , “ Այրելի բարեկամք , կ'ուզէք հատուցանել Պ . | Վլվին Ճամբորդութեան ստակը , խրկեցէք անոր տասուերկու ստակ , ութը ստակը երկու հաւկըթին համար , ու մնացած չորսն ալ իրեն շահ , ” :

Ճ'ոն | ոնտրայի մէջ շատ տուներ ունէր , շատ շնութիւններ ալ ըրաւ . զարմանքն աս է որ իրեն տուններէն մէկն ալ պարապչէր մնար : Ուստի երբոր | ոնտրա կ'երթար՝ ամենսկին պանդոկ չէր իջնար , հապա իրեն վարձուարներուն մէկուն քով կ'երթար , որպէս զի կարենայ առանց ստակի բանը լրինցընել : Իրեն Ճամբորդութեան կարասիքն էին երկու անկողին , երկու աթոռ , ու գրասեղան մը , նաև մէկ պառաւ աղախին մը կաղ , որ Ճ'ոնին կահարասեացը հետ կ'երթար : Ի՞ս խեղջ պառաւին մահը

շատ ցաւալի կերպով եղաւ : Ճ'ոն | Վլվին մէկ աղգականը լսելով որ քանի մը օր առաջ | Վլվին | ոնտրա եկեր է կը փընտըռուէ զինքը , և երկար փնտուելէն ետեւ անընակ պալատի մը դիմաց կու գայ , ուր տղայ մը կ'ելլէ առջեւը կ'ըսէ թէ քանի մը օր առաջ մէկ ծեր մը այն գուռը բացեր է ու նորէն կղպակով ներսէն գոցեր է : Ճ'ոնի աղգականը կը զարնէ զանգակը , կը սպասէ , ձայն ձուն չկայ . ալ աւելի կը զարնէ , պատախան չկայ . այս որ կը տեսնէ կը զարհուրի կը սոսկայ . մէկէն դարբին մը կը կանչէ ու գուռը բանալ կու տայ : Այսուուխէ մը վեր կ'ելլէ չելլեր հառաչելու ձայն մը կ'առնէ , մէկէն մօտ խուցի մը մէջ կը վազէ ու կը գտնէ | Վլվին խեղջ անկողին մը վըրայ պառկած դեղնցած ու անզգայ : Այսէն բժիշկ կանչել կու տայ , դեղ կ'ընէն , վերջապէս | Վլվին աշուըները կը բանայ , ու կը պատմէ որ երկու օր է որ ամենսկին բերանը բան չէ դրած , առաջ աղախինը զինքը կը հոգայ եղեր , բայց ան ալ հիւանդ ըլլալով կամ պառկելու գացած պիտոր ըլլայ և կամ հիւանդանոցը գացած : Վզգականը կը վազէ պառաւը փնտուելու , յանկարծ խցի մը մէջ զինքը գետինը փառուած կը գտնէ . բժիշկը կը քննէ կ'իմանայ որ խեղջը երկու օր առաջ մեռեր է եղեր : Վճահութիւնը երբոր այս աստիճանիս կը հասնի՝ ալ մարդը գլխէ կը հանէ կը խենթեցընէ , ու անկէց վերջը անկարելի է դէմն առնելը : Բայց Ճ'ոնը ագահութեան հետ լաւ յատկութիւններ ալ ունէր , միանգամայն սուր դատողութիւն : Իրեն ստակը աձեցընելու ամենսկին ջանք չունէր . ոչ պատիւ մը ընդունելու կամ կառավարութեան մէջ մանելու : Ի՞նգամ մը | որտ | Արթին ատեանին մէջ ձայն ելաւ որ Ճ'ոն | Վլվին իշխան պիտի ընտրուեր , և թէ որ ասիկայ իրաւ ըլլար , անշուշտ աս պատիւը մահուընէն գէշ պիտի համարէր : Ի՞ս մերիկայի պատերազմին ատեանները տըներուն գինը շատ իջաւ , որով | Վլվին մեծ վնաս քաշեց . անկէց վերջը նորէն | ոնտրայէն հեռացաւ ու դարձաւ

Վիպս : Պեղքշըրի մէջ ուներ դատաւորական պատիւ, որ ուրիշի մը անցեր էր, և թէպէտ ինքը կը ջանար քիչ ստրկով նորէն ձեռք ձգել, սակայն մեծ վնաս սեպելով, դատաւորական իշխանութիւնն ալ ձգեց առանձնացաւ : Այրոր ատեան ալ երթար՝ ոտքով կ'երթար ու կը դառնար, առանց ամենեւին ցրտոյն կամտաքին համար տրտնջելու : Ինգամ մը մութիւն տուն դառնալու ատենը կառքի մը զարնուեցաւ, անանկ ուժով որ մէկէն գետինը փուռնուեցաւ, ու երկու սրունքներն ալ կոտրեցան . ատեանին անդամներէն մէկը վրան խղճալով զինքը վերուց ու մէկէն վիրաբոյժ մը կանչել տուաւ . վիրաբոյժն ըսաւ որ դիպուածը ծանր էր, և ըռընտնալու համար երկայն ատեն պէտք էր . “ Դու ասանկ կ'ըսես, պատասխանեց լովզ, բայց ես անանկ չեմ ըսեր . իմ սրունքներս չեմ կարծեր որ այնչափ տկար ըլլան, և թէ որ կ'ուզես սրունքներէս մէկը դուն առ դարմանէ ինչպէս որ կ'ուզես, մէկան ալ ես առնեմ . ես կ'ապահովցընեմզքեզ որ իմն աւելի առաջ կ'ըսընտնայ,, : Հանձն առաւ վիրաբոյժը այս պայմանը, բայց տամնը հինգ օրէն վերջը յաղթուեցաւ :

Տասուերկու տարի 1 ոնտրա կենաւէն վերջը կը կարծուէր թէ հոն պիտի լըմբնցընէ իր կեանքը : Բայց լովզ 1785 ն ուզեց լոթոք դառնալ . ան ատենը վաթսունը հինգ տարեկան կար, ու զրեթէ ուժէ ընկած էր, անանկ որ անկարելի բան կ'երեւար ալ ողորմելի ձիու մը վրայ երկու չոր հաւկիթով աս ճամբորդութիւնը կատարելը . իսկ կառքով երթան ալ իրեն քսակին ձեռք չէր տար : Այրոր մտածմունքը զինքն առեր էր, բարեբաղդաբար հարուստ մարդ մը, որ լովզին բնաւորութիւնը զիտէր, խղճալով զինքը իր կառքին մէջ առաւ . լովզ սիրով յանձն առաւ, ու շատ ուրախութեամբ լոթոք մտաւ, մէկէն գնաց կովերը աչքէ անցնելու, ու հոն կովապանը տեսնելով խորհըրդածութիւն մը ըրաւ . աս ինչ իսենթութիւն է կ'ըսեր, որ պարապ տեղը

սա մարդուն այնչափ ստակ տսում անասուն պահելու համար . իրաւ որ մարդու ծերութեան ատենը խելքը գլուխը կը ժողվէ եղեր : Աէր մտածէր թէ կովերէն եկած շահին դիմաց կովապանին վճարքը բանի տեղ զնելու չարժէր : Աւագը վերջի ատեններն ալ առանց ամենանալու իր մշակներուն հունձք ժողվելու ժամանակը ինքն ալ անոնց ետեւէն կ'երթար, որպէս զի անոնց ձգած ները ինքը ժողվէ . արեւուն տաքութիւնը, ծարաւը, աշխատութիւնը բանի տեղ չէր զներ . իսկ անօթութիւնը և աչքին կ'երեւար : Հիւանդութիւն ոչ բերող ու անսառողջ կերակուրներ կ'ուտէր . սովորական կերակուրն էր՝ իր երկիրներուն մէջ մորթած կենդանիները ու իր կաթնարանին մէջ շինուած պանիրը, որչափ տարուան ալ ըլլար, ու որչափ հոտած ու մքլոտած : Լովզի ագահութիւնը տեղացոց առակ եղած էր . զրացիները ու նոյն իսկ իր ծառաները վրան կը խղճային և զինքը կը նախատէին : Ինոնց նայուածքէն կ'իմանար անոնց մտածութիւնները ու ամենէն կը կասկածէր : Ա երջապէս կասկածները շատնալով սկսաւ վրան հիւանդութիւն գալ . վերջի ատենները շատ քիչ կը քնանար ու երբեմն երբեմն քունին մէջ գինովին պէս կը պոտար . “ Աէ, չէ . չէք կը նար գողնալ . ես գիտեմ իմ ստակներս պաշտպանել . . . Ա'կ զիշեր մը իրեն ազգականներէն մէկուն տունը գտուելով, զիշերը յանկարծ ելաւ սկսաւ սենեկէ սենեակ պտըտիլ . հանած աղաղակէն մէկը արթնցաւ, ովէ, հարցուց : “ Լում, պատասխանեց Ճ'ն լովզը, ո՛չ, գողերու ձեռք եմ ընկած, որ գողցեր են իմ հինգ ու կէս կինէս, իմ բոլոր հարստութիւնս, իմ բոլոր յոյսա . . . Այրեմն կ'երթար զգեստի դարանի մը մէջ կը պառկէր, գողերէն ապահով ըլլալու համար : Ինգամ մըն ալ հակուած սգուած գտան զինքը անկողնին մէջը . այսինքն զլուխը հին զլիարկ մը դրեր էր, ոտուըները պատուած կօչիկներ հագած և մէկ հին ու կոշտ գաւազան մը ձեռքը բռնած :

Այսպիսի պժագլի ախտով մեռաւ  
Ճ՛ռն Կվկ 1789<sup>ին</sup>, մահուանը վրայ  
ցաւող մը չունեցաւ, բայց շատ ուրախա-  
ցան իր ժառանգները :

## ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՕԴԵՐԵՒՈՒԹԱՆՈՒԹԻՒՆ

Ա. Բարեխառնութեան :

Եշանակ : — Այստեղաբաշխական ե-  
ղանակները արևուն ընթացքովը կը  
կանոնաւորուին, իսկ օդերևութաբա-  
նութեան մէջ կը նային բնագնինք բա-  
րեխառնութեան ընթացքովը կանոնա-  
ւորել: Ձմեռը ամենէն իրիստ եղանակն  
ըլլալով՝ այսպէս պէտք է կարգաւորել  
որ տարւոյն ամենէն ցուրտ օրը այս ե-  
ղանակին ըստ կարի մէջ տեղն իյնայ: Այս միջոցս զրեթէ յունուարի 15ե-  
րորդ օրը կ'իյնայ, որով ձմեռը դեկ-  
տեմբեր, յունուար, փետրուար ամիս-  
ներէն կը կազմուի: զարունը՝ մարտ,  
ապրիլ, մայիս: և այսպէս հետզհետէ:  
( Դերւութաբաններէն քիչ հոգի աս-  
տեղաբաշխական բաժանումը կը գոր-  
ծածէն, որ ձմեռը դեկտեմբերի 21էն  
կը սկսի: Ամանը ալ կան որ երկրիս  
մասնաւոր կէտերու համար արուես-  
տական եղանակներ կը հնարեն: ինչ-  
պէս օրինակի համար ձմեռը ան ատեն  
կը սկսին երբոր ջերմաչափը առաջին ան  
գամ զրոյ աստիճանը ցուցընէ, իսկ գա-  
րունը՝ երբոր առաջին տերևները կը  
սկսին երեալ: Բայց այսպիսի բաժան-  
մունք մը գիտութեան մէջ խառնակու-  
թիւն կը ձգէ, վասն զի այն ատեն եր-  
կրիս երեսը եղանակաց անթիւ բաժան-  
մունքներ կ'ըլլային:

Այսդեցութեան լայնութեան ՚ի վերայ բա-  
րեխառնութեան: — Ուէ որ լայնութեամբ  
իրարմէ հեռու եղած երկիրները մէկ-  
մէկու հետ բազգատելու ըլլանք՝ կըտես  
նենք որ անոնց միջին բարեխառնութիւնն

ները այնչափ վար են որչափ որ հասա-  
րակածէն հեռու են, և հետեաբար որ-  
չափ որ արևուն միջին բարձրութիւնը  
իրենց հորիզոնին վրայ քիչ է: Աստի-  
մինչդեռ հասարակածին վրայ միջին բա-  
րեխառնութիւնը 27° և 28° աստիճան-  
ներուն մէջ կըտարբերի, Դէնէրիֆֆա՝  
21°, 7 է, Փարիզ՝ 10°, 8 է, և Հիւսի-  
սային Գլխոյն վրայ՝ 0° է: Հովերուն  
ուղղութիւնն ալ, խոնաւութեան քա-  
նակութիւնն ալ, ևն քիչ ազդեցութիւն  
չունին միջին բարեխառնութեան վրայ,  
որ հաւասար լայնութեան տակ՝ ծով-  
եղերեայ տեղուանք և կղզիներու մէջ  
աւելի բարձր է քան թէ մեծամեծ ցա-  
մաքներուն ներսերը:

Ո՞նուըրուն վերագոյն խառերուն բարե-  
խառնութեանը: — Տեղոյ մը միջին բա-  
րեխառնութիւնը ոչ միայն նոյն տեղուոյն  
հասարակածէն ունեցած զրիցմէ կը կա-  
խուի, այլ նաև ծովուն երեսէն ունե-  
ցած բարձրութենէն ալ կը կախուի:  
Ուէ որ լերան մը ստորոտն ու զագաթին  
վրայ ջերմաչափին ընթացքը դիտելու  
ըլլանք՝ կը տեսնենք որ միջին չափը այն  
չափ վար կ'իջնէ որչափ որ լեռը բարձր  
է: օդաչու ձանապարհորդներն ալ նոյն  
բանը դիտեր են: Անդհաննբապէս կը  
կարծուի որ բարեխառնութիւնը մէկ  
աստիճան կը պակսի 185 մեդր բարձրու-  
թեամբ: բայց այս թիւս կը փոփոխի՝  
լայնութիւնը, եղանակը, օրուան ժամը՝  
փոփոխելով. վասն զի բարեխառնութե-  
նուազումը՝ ամառը աւելի շատ է քան  
թէ ձմեռը: կէսօրուընէ ետև աւելի  
զգալի է քան թէ առաւոտը: դարձեալ  
երկընքին պարզութենէն, անձրեէն,  
կարկուտէն, և ուրիշ ջրեղէն օդերեւոյթ-  
ներէն ալ կը կախուի: